

ՄԻ ՕՐ Խ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ⁽¹⁾

... Դիլիջանի ձորում՝ ընկերներից մէկը կիսաձայն ասաց՝

— Այստեղ Տաճիկները շատ Հայ կոտորեցին:

1) Նոր Ուղիի չորրորդ թիւէն, գոր վերջին սլափուն ստացանք, կ'արտատպենք թարգմանութիւնը Մաքսիմ Կորբի Մի օր Հայաստանում էջին, որ մէկ գլուխն է մեծանուն գրագէտին խորհրդային Միութեան երկիրներուն մէջ պոռոյտէ մը յետոյ հրատարակած «Ճամբորդութեան նոթերուն»: Կորբի մէկ օր մնացեր է Շայաստան, բայց այդ կարճ միջոցին՝ մօր երկրին բնական տեսիլներէն, ժողովրդական տիպարներէն, բարբերէն, պարերէն, վերածնող կեանքի ու վերաշինող աշխատանքի երեւոյթներէն կրեր է ուժեղ տպաւորութիւններ գոր արտայայտեր է իրեն յատուկ աշխոյժ ու գունագեղ ոճով:

Պիտի նկատենք միայն, անցողակի, որ հասկանալի գտնելով հանդերձ յեղափոխական մեծ գրագէտին «Իմպերիալիստական կամ պուրժուագիական կուլտուրայի» դէմ զայրագին բայառանքութիւնները, արդար գտնելով հանդերձ հայ ժողովուրդի վրայ խուժող կոտորածներու եւ ալազան աղէտներու մէջ եւրոպական դիւանագիտութեանց ու շահամուկաշառուող մեծ լրագիրներու պատասխանատուութեան բաժինը մասնացոյց ընող իր խարանիչ տողերը, մեծանուն վիպասանը Հափագանցութեան եւ անիմաստութեան մէջ գլորած կը տեսնենք երբեք սենեփոնի օրերէն ի վեր նոյնը մնացած հայ գիւղական խոնարհ ծակամուտ տնակներուն խեղճութեան պատասխանատուն այժմեան արեւմտեան «Իմպերիալիստական կուլտուրան» կը համարի եւ նոյնիսկ ցատկունց հինաւուրց պարերը «յեղափոխութեան կենարար փոթորիկին յարուցած գեղեցկութեանց» կարգը կը դասէ...

Ի. Խ.

Նրան պատասխանեցին.

— Այսպիսի գեղեցկութեան ծոցում ի՞նչ կարիք կայ այդ բանը մտաբերելու:

Այո՛, զարմանալի սիրուն է: Թուով է՝ կենդանի էակների սիրով ու քնքշութեամբ լեռները գրկել ու պահպանում են ձորը: 1500 մ'եզր բարձրութեան վրայ օդը չափազանց թափանցիկ է և կարծես ներկւած մեղմափայլ կապույտ գոյնով: Ձորի գործած տպաւորութեան գերակշռող գիծը մեղմութիւնն է, նրա կապույտ հունը լեռի լեցուն է փաթեմ կանաչով եւ օրերը կարծես լողում են կանաչ ալիքների վրայ Սեւանայ լճի ուղղութեամբ: Հարաւային Անկրկովկասը շշմեցնում է իր գեղեցկութեան պէսպիսութեամբ ու հարստութեամբ, այս ձորը ամենագեղեցիկներիցն է: Սակայն նրա գեղեցկութեան վրայ յուշերի անջնջելի մնալ ստուեր է ընկել մերձուր անցեալից:

Քնարերգօրէն գեղանի Դիլիջանի ձորը՝ ամենից քիչ՝ կոշմաբային, արնաշաղխ սճիւրների պատկերի յուշերի համար սփռի ծառայէր որպէս շրջանակ: Սակայն մարդու յիշողութեան մէջ ակամայ յարութիւն է տունում Հայաստանի ժիթ. գարի վերջի եւ ի. գարի սկիզբի ողբերգական պատմութիւնը, Պուսի ջարդը, Սասունի կոտորածը, «Մեծ մարդասպանը», «Կուլտուրական» եւրոպայի քրիստոնեաների քստմնելի անտարբերութիւնը իրենց «քրիստոնեայ եղբայրների» բնաջնջման հանդէպ, Հայոց եկեղեցական գոյքերի թալանի ամօթալի ախար, վերջին տարիների առճկական արշաւանքների սարսափները — գծուար է վերջիշել այս եռան-

դուռն ժողովուրդի տպրած բոլոր ողբերգությունները:

Նման փաստերը զարմանալի արագութեամբ ու ճարպիկութեամբ մոտանում են «Հումանիտաները», իտալիաները, ազատհայտեան, հախանձի, ստրկութեան և ժողովրդական զանգուածների ցինիկ բռնաջնջման վրայ հիմնուած «կուլտուրայի» պաշտպանները:

Այդ «մինչեւ ակաճները արեան և աղտի մէջ խրուած «կուլտուրայի» պաշտպանների ստույգներն ու կեղծաւորութիւնը հասնում է անյայտ խելագարութեան ու ոճրագործութեան, որ արժանի պատիժ չունի:

... Անցնում ենք հայ գիւղերի կողքից և գիտելով նրանց մոռանում ես, որ ապրում ես ի. դարի երկրորդ քսանհինգամեակում, միլիարտատէրերի, միլիոնատէրերի օրօք, խելացիոր ճիսութեան տեխնիքայի զարմանալի զարգացման շրջանում: Առանց ծինելագիտելի, առանց լուսամուտների, ցածրիկ, անտաշ քարերից շինած շէնքերը, անկարգ կալել են դաժան հողին: Սրանք Ադնեֆտի բանաւորական հին կամարներից պակաս են հմանում մարդկային բնակարանի, Մարգարի դաշտերում ոչխարների փարախներն անգամ աւելի սուղիք են կառուցուած: Հայերու ահաստատ ու վհատ գիւղերը կալել են չոր հողին, անյարմար տեղերում: Մի տեղակ քաշում, ամօթ է զգում մարդ նրանց տեսնելիս: Տեղ տեղ նշմարում են գարու ցանքի մանիշակագոյն բծեր: Մէկ մէկ աչքի են ընկնում կիսամերկ մանուկներ և ուժից վեր աշխատանքից հիւժուած կանայք, մուգ հագնուած: Այս նախադասական կացարաններում, մարած հրաբուխներ թաքցնող ճաղատ լեռների ծոցում, խիստ ձմրան, պէտք է որ ցուրտն ու մեհութիւնը մաշեն մարդուն: Այս բարձրութեան վերայ ձմեռը երկար է տեւում և ցուրտերը սաստիկ են լինում: Երբ որ աշապիսի գիւղերը, մարի մէջ, Նիւ Եօրքի, Լոնտոնի,

Փարիզի, Բերլինի կողքին ես գնում, առաւել լաւ է երեւում արդի կուլտուրայի սուտը և աւելի ըմբռնելի նրա պաշտպանների տեղութիւնը գէպի կորհրդային Միութիւնը, — մի տեղութիւն, որ պիտի լաւի աշխատանքի մարդկանց բոլոր ատողներին:

... Բացում է Սեւանի հոյակապ կապոյտ հայելին, տես երկնքի կտոր, որ վար է իջել գետին, լեռների միջեւ: Երկրից 1395 քառակուսի քիլոմէթր տարածութիւնը խլած այս լիճը լի է ձուկով, առաւելապէս կարմրախոյտով, եւ ինձ տալիս որ շուտով այդ ձուկը, սառցրած պիտի Փարիզ ուղարկեն:

Լճի ափին մեծ ուս գիւղ կայ, սրտեղ ապրում են խոշոր ու գէշ կանայք, խոշոր միրուքաւոր մուժիկներ, լաւ կերպրած խարտեաշ մագերով մանուկներ: Շատ առողջ ժողովուրդ է, բայց մեծամասնութեան աչքերը — տարօրէն թափանցիկ եւ քնկրտ են, այդպիսի աչքեր ես նկատել եմ գուրցերական լեռների հովիւների մէջ եւ խորհիլ, որ իշտականութիւնից ու ժամանակից դուրս տպրող մարդկանց աչքեր են դրանք:

Սեւանի առափնեայ բնակիչներից մէկը, թիվնեղ, վայելչակազմ, թաւ ալեխառն մօրուքով, կանգնած էր, ձեռները մէջքին դրած, հալում էր աւգամբելին և կարծես ուզում էր մտաբերել տեսել է նա հման ապլ թէ ոչ:

— Երեւան էք գնում, հարցրեց նա հաստ ձոյնով:

— Այո՛:

— Երեւանը հեռու է, հաղորդեց նա և զանգաւորէն մի կազմ քաշուեց:

Գիւղին աները սուղիք էն, փայտաշէն, թէեւ շուրջը սնտառ չկայ եւ լեռները գրեթէ բացառապէս հրաբխային Նիւ թից են: Ինձ տալիս կան բաւական փափուկ և կառուցման համար յարմար քարեր: Մի սան մէջ ձկնաբուծական կայան կայ: Այստեղ ուսումնասիրում են լճի կենսաբանք:

Հետաքրքրական փորձ են կատարել, Սեւանի կապույտ ջրին մէջ գցել են Լազաւ լճին սիւզ ձկան 15 միլիոն ձու և փստոհ սպառում են, որ սիւզերը կը յարմարւին գրեթէ 2000 մեգր բարձր այս ահաւին աւազանի կեանքին, Այո՛, ամէն ուր, Խորհարդների Միութեան երկրի բոլոր կէտերում խիզախ ու մեծիմաստ փորձեր են կատարում, նոր կեանք են կառուցանում: Այդ շինարարութիւնը առաջին բանն է, որ աչքի է ընկնում, երբ մօտենում ես երեւանին:

Կարմրաւուն ամպերի գլխարկ դրած արծաթազուլէս Արարատի խոժոռ զանգուածի ֆոնի վրայ միսրապոյն քարաշէն քաղաքը հեռուից մէջս յարուցեց կառուցողական լատտալների վանդակի մէջ բանասարկութիւն տալարութիւն: Բանաւորների մըրջինէ ֆիզուլները կարծես թէ անմիջապէս բերլիական լեռան քարէ զանգուածից նոր շէնքեր են գուրս բերում: Այդ տալարութիւնը նրանից էր, որ շինարարութիւնը քաղաքի ծայրամասերում է կատարւում և տեսանելի է լատտալների միջից: Քաղաքումիջում այնքան էլ շատ չեն կառուցանում, ինչպէս թւում էր հեռուից:

Աղբատ է Հայաստանը, բազմիցս սրմբակահարւած թշնամիների ձիերից, աւերւած այն գաղանային առելութեամբ և արեան ծարաւով, որ այնքան հմուտ հըրահրում են քրմերը ոսկու առտուածի, որի անունն է՝ «Գեղին Գեւ»:

Այո՛, Հայաստանը աղբատ է, սակայն արդէն իսկ երեւանը զարգարւած է շատ լաւ հիգրօշէնով, որի ուժով աշխատում է բամպակապոխչ, իւզի, սապոնի գործարանները եւ լատտարում քաղաքը: Եռանգուն ստալ է մղւում բանաւորների համար բնակարան կառուցանելու գործը: Երկու խոշոր ստան արդէն բնակւած են: Ամենուր գգացւում է անոթ խիզախ ու խելօք ձեռքը եւ շարժումը քաղաքում մեծ տօնի նախօրեակի շարժման ընդթ է կրում:

Շատ լաւ թանգարան կայ կարմա-

կերպուած: Օրագրւած են բազմաթիւ գործեր, որոնք ախաի աղագօրէն կերպարանափոխեն քաղաքը: Երկրաբանական հետազօտութիւններ են կատարւում՝ բալանգակ երկրում: Արդէն իսկ գլու է արւած, որ անկասկած Հայերին խոշոր միջոցներ կտայ երկրի արդիւնագործական և կուլտուրական զարգացման համար: Արագ աճի մօտ հրաբխային ուռփի հարուստ հանքեր են յայտնագործւած: Այդ նիւթից է կառուցուած Նաղալին և Նաղալիի ծոցի բոլոր առաւելեայ քաղաքները: Սակայն Արագածի առօրէ աւելի կարծր է, չի ջարդւում միեմից և միաժամանակ հեշտութեամբ կարւում է, գրեթէ ստարմի պէս: Հէնց հանքում կարելի է տուփից սիւներ, լուսամուտի և դանների պարակալներ, բարձակներ, քիւեր պատրաստել, ճարտարապետի ստած չափով, հնարաւոր է ամէն ծաւալի խորանարդներ շինել: Հանքատեղերում՝ հարիւրաւոր միլիոն գօն տուփ կայ: Այդ հարստութեան շահագործումը սկսած է, արդէն երկաթուղային գիծ են անցկացրել ու միջեւ հանքերը: Կարծիք կայ, որ տուփը աղիւսից աւելի էժան կը հատի և կառուցողական նիւթերով աղբատ Հիւսիսային Կովկասում և Ուկրաինայում՝ լաւ կը տարածուի: Հաւանական է, որ Հայաստանի հրաբխային հողը իր ժողովուրդին ալ հարստութիւններ էլ կը հաւիթէ: Երեւանից թիֆլիս վերադառնալիս մենք ճանապարհին տեսանք հողի երես ելած սեւ սքսիդեան հրաբխային տպակին:

Երեկոյեան, միախալից յետոյ, քաղաքային ալգում, երկատարգութիւնը ցուցադրեց Սառուցիների պարերը, որոնք իրենց ինքնատիպութեամբ եւ գեղեցկութեամբ բացառիկ բաներ են: Ես պարի արուեստի մասնագէտ չեմ, բաւելի են անտարբեր եմ վերաբերւում, կենցաղական պարերին հայում եմ ինչպէս թեթեւ ու զուարթ լարախաղացութեան վրայ, ֆոքսորտը՝ առանց գրուանքի, բայց իմ կարծիքով այս «պարի» համար շորերն աւելորդ են և երեւի կաշկանդում են ա-

զատութիւնը պարտոյնների՝ որոնց կարելի է նաեւ անամօթներ կոչել, թէեւ ի հարկէ բնութեան մէջ գոյութիւն ունին աւելի անամօթ էակներ, օրինակ՝ ձանձերը, աքաղաղները, հաւերը, ալձերը, շնիկները:

Սասունցիների պարերը չեն վարժացնում ձեւերի բարդութեամբ ու բազմապիտանութեամբ եւ չեն էլ ձգտում նրան: Նրանց մէջ ուրիշ բան կայ աւելի նշանակալից ու խորունկ: Բեմ են ելնում՝ երկու երաժիշտ ազգային գունեղ հարուստով՝ մի մեծ թմբուկ եւ մի զիլ գուսնա, իսկ նրբանց ետեւից դուրս է գալիս մի շացուցիչ, պայծառ և բազմադոյն մարմին, քրտան տղամարդ: Նրանք անցնում են ուսուսի, յետեւներից իրար ձեռք բռնած, նրբանք մի մարմին են, որ շարժւում է միասնական, զարմանալի սիթմիկ մղիչ աւժով: Այդ մարմինը շրջան է կազմում, ծաւալւում որպէս սպիրալ, շխուսում ազիլ գիծ գտնում եւ գտնադն ծուռ գիծեր կազմում: Իզէալական սիթմը, ձեւերի կառուցման թեթեւութիւնն ու սահունութիւնը աւելի և աւելի է ամրացնում միասնականութեան, միաձուլութեան թովիչ իլիւզիան: Գիտար է նշմարել աւանձին պարողին, տեսնում ես թէ ինչպէս աւջեւ օրօրում է գեղեցիկ գէմքերի մի շարք, նկատում ես նրանց ժպտը, նրանց աչքերի փայլը, մէկ թւում է որ նրանք թւով շատացան. մէկ էլ — քչացան: Ամէն մէկի անհատական գծերը աննշմարելի են, եւ շարունակ ձեզ հետ խօսում, ժպտում է ձեզ կարծես մի գէմք, ֆանթազիստիկական մի արարածի գէմք, որի հերքին կեանքը անասելի հարուստ է: Զուսնի երգը աշխուժ է բերում, բայց նրա զիլ ձայնը աշխպէս ակննջի ծակում: Ուժգին, բայց կախուղ զարնում է թմբուկը եւ այդ երաժշտութեան յետեւից մի ուրիշ երաժշտութիւն ես տեսնում՝ մարդկային ձկուն մարմնի զարմանալի, գեղեցիկ շարժումների երաժշտութիւնը, նրա տպաւ խալը գունեղ զգեստների բազմ-

բանդ ալիքների մէջ: Մէկ մէկ, երբ բազմադոյն մարմնի շարժման թափը սաստկանալով սկիզբս և ծխածանաւոր մըրըրի էր վերածւում, ես սպասում էի, որ պարողների շղթան կը քակուի հատ հատ օգակների, բայց այդ մըրկի մէջ էլ նրանք պահպանում էին շարժումների միահատուկ սահունութիւնը, ուժգնացնելով ու խորացնելով զօրութեան ու միասնականութեան տպաւորութիւնը: Ես երբէք չեմ տեսել և չէի կարող պատկերել շատերի միասնական գործունէութեան մէջ այսպիսի կատարեալ միաձուլութիւն, շագկապութիւն: Անտարակոյտ, այդ հաւանօրէն շատ հին պարի մէջ սխմալական մի բան կայ թագնուած, բայց ինձ չաջողուեցաւ իմանալ թէ ինչ արդեօք բուրմերի կործնական պար թէ ազգիկների պար: Ինձ թւում է նրա մէջ կայ ինչ որ ընդհանուր բան Գուրխացիների ազգական պարի հետ, որ չեմ յիշում ինչպէս է կոչւում «պերխուլի» թէ «խորուլի»: Սակայն նրա մէջ ոչինչ չկար, որ յիշեցնէր խիստների (1) վաղաք «ապենիյէն», որ ես տեսել եմ Նիմֆի-Նովգորոտում, Բոլտախայի «նաւում» (2) կամ «պտտուղ գերվիշների» հիթերիկ ջղացնումները, որոնցից, ինչպէս տեսնում եմ, վարակուել են նաեւ մեր սղանդաւորները — «կովկասի պրիդունները»: Սասունցիների պարը երեւի ազգիկների յաղթական պարն է:

Ոչ հուսալ ինքնատիպ եւ նոյնքան դիւթիվ գեղեցկութեամբ պարում էին կախալը, որ նոյնպէս արեւելեան հազուստներ ունէին վառ ու գունեղ: Պարելով նրբանք ցոյց էին տալիս ինչպէս են տանուրում մաղերը, շալարում գէմքը, կուտ տալիս թոշուններին, մանում, և մենք գարձեալ հմայուած էինք նրանց շարժումների

2) «Նաւ»ը սոցիալական է:

[Ն. Թ.]

1) «Խիստ»ները աղանդաւորներ են: «Խաղիւն»ն պար է, որ նրանց համար կրօնական արարողութեան նշանակութիւն ունի: [Ն. Թ.]

զարմանալի ուրիշում, ժեսթերի գեղեցկութեամբ: Կանոյք բաժան բաժան էին պարում և իւրաքանչիւրի ձեռքի շարժումը անհասական էր, այդ պատճառով նրանց համար միասնականութիւնը՝ ժամանակի մէջ ուրիշումը պահպանելն աւելի գոյարար էր, իսկ նրանք պահպանում էին իտէալական կերպով: Այդ նրանք կատարեցին կազերի գաւեշտական պարը, — պարում էին աշնայէս, ասես նրանից ամէն մէկի ազգ-

րը ջարդուած է, և թէեւ ծիծաղաշարժ շարժումները տգեղութեան սահմանին էին հասնում, այսու հանդերձ նրանք զարմայնում էին հարմունիայով և գեղեցկութեամբ:

— Մեր ժամանակաշրջանը քանի՛ քանի՛ տաղանդ է կեանքի կոչել, ի՞նչքան գեղեցկութիւն է յարուցել յեղափոխութեան կենարար փոթորիկը, — մտածում էի ես ճամբին Երեւանից յետ դառնալիս:

ՄԱՔՍԻՄ ԿՈՐՔԻ